

Ս. Լուսաւորիչ Անւոյ. — Eglise du S.t Illuminateur (Ani).

կադոյն կողմն 'ի հինգ բոլորակս, չորք յանկիւնան և մին 'ի միջի մեծագոյն և գմբեթաւոր, ունելով այլոցն 'ի սա դրունս մուծից. մնան ցարդ ծորակք աւազանաց լուալեացն: — Բաց յայսցանէ չերևի այլ շինուած նշանաւոր, բայց միայն կամրջախելք 'ի հարաւային արևմտեան ծայր քաղաքին 'ի վերայ գետոյն Ախուրեան, և կամարակապ լայն ստնդուխք առ գետեզերբն 'ի հարաւոյ կաթուղիկէին. իսկ այլ ամենայն շէնք զարմանալի քաղաքիս՝ 'ի 500 ամաց հետէ առ սակաւ սակաւ կործանեալ և հողոյ հաւասարեալ դնին, որպէս 'ի քուն անզարթչելի. ոչ է յայտ եթէ խպառ անբնակ և աւերակ եղև քաղաքն յետ մատնելոյն 'ի ձեռս Յունաց յամին 1045, և անկանելոյ 'ի բուռն Ալփասլանայ յամին 1064, Պարսից և Վրաց 'ի բազում նուագս, և յետոյ Թաթարաց յամին 1239, յետոյ դարձեալ Պարսից, առ որովք՝ աւանդի յամին 1319 'ի սասանութենէ մեծէ անշքացեալ Անւոյ և բնակչացն խոյս տուեալ. սակայն յԱռաքելոցն եկեղեցւոջ գոն արձանք գրեալք յամին 1320 և 1348 (ՉԿԹ. ՉՂԷ), յորոց յայտ լինի զի ցկէս ԺԴ. դարու չէր լքեալ քաղաքն, թէպէտև շատք 'ի նախնեաց Անեցւոց վաղու ևս չուեալ գնացեալք էին, ոմանք յայլ կողմանս աշխարհին Հայոց և յոլովք տարադէմք յաշխարհս արևմտից, 'ի Լեհք, 'ի Ռուսք և 'ի Ղրիմ. և ոչ այնքան 'ի տարերաց որքան 'ի տիրողաց բռնութենէ թուի տագնապեալ քաղաքին. և առաւել քան յերկրաւոր սասանութեանց՝ յերկնաւորին ցասմանց. որոյ հանգոյն սոնքացեալ յղփացեալ մեծապանծ մայրաքաղաքացն Անւոյ՝ ապախտ և զսովաւ արարեալ, սոյնին նման՝ թէպէտ և կրսեր յոյժ սա ժամանակօք, թաքոյց 'ի յետնոցս զվախճան և զվերջին արկածս սորին, յամօթ և յափշութիւն գխտնապանծ մտաց մարդկան, և 'ի զեղջ Հայորերոյ. և այժմ հօտից հանգրուան և խոտաւէտ է գետին արքայանիստ և սրբազնեմ քաղաքին Անոյ, զորոյ խոտարօտան պայազատութեամբ ժառանգեն մահմետականք ոմանք՝ որպէս թուի վրիպեալք 'ի կրօնից Հայոց, Խաթունի որդիք կոչեցեալք. վասն որոյ ումն 'ի Ռուսաց բանասիրաց որ իբր տասն ամաւ յառաջ եղ 'ի քննին աւերակացս, 'ի դէպ պատշաճեցուցանէ մուծից դրանց քաղաքիս՝